

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2010 թվականի դեկտեմբերի 9)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով 1995 թվականի հունվարի 20-ի «Մաքսային միության մասին» համաձայնագրի, 1999 թվականի փետրվարի 26-ի «Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի մասին» պայմանագրի, 2007 թվականի հոկտեմբերի 6-ի «Միասնական մաքսային տարածքի ստեղծման եւ Մաքսային միության ձեւավորման մասին» պայմանագրի վրա,

գիտակցելով գյուղատնտեսական արտադրանքի փոխշահավետ, արդարացի եւ շուկայամետ առևտրի համակարգի հետագա զարգացման անհրաժեշտությունը,

ելնելով Առևտրի համաշխարհային կազմակերպությանը միանալիս Մաքսային միության անդամ պետությունների՝ դիրքորոշումների փոխհամաձայնեցման նպատակից, ղեկավարվելով միջազգային իրավունքի սկզբունքներով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի առարկան

1. Սույն Համաձայնագրի առարկան գյուղատնտեսական ապրանքներ արտադրողներին պետական աջակցության իրականացման կանոնների սահմանումն է:

2. Սույն Համաձայնագիրը գործում է Կողմ պետությունների Միասնական տնտեսական տարածքում եւ կիրառվում է սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող

թիվ 1 հավելվածում նշված՝ ապրանքների (այսուհետ՝ «գյուղատնտեսական ապրանքներ») նկատմամբ:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Համաձայնագրում գործածվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«վարչատարածքային միավորներ»՝ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտները եւ (կամ) Բելառուսի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության մարզերը (ներառյալ Մինսկ, Աստանա եւ Ալմաթի քաղաքները),

«գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցություն»՝ Կողմ պետության կառավարության կամ այլ պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից գյուղատնտեսական ապրանքների արտադրողներին ուղղակիորեն կամ իրենց կողմից լիազորված գործակալի միջոցով ցուցաբերվող ֆինանսական օժանդակություն:

Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության ծավալների հաշվարկի կարգը ներկայացված է սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող թիվ 2 հավելվածում,

«լրավճար տրամադրող մարմին»՝ Կողմ պետությունների մեկ կամ մի քանի պետական մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին, որոնք գյուղատնտեսությանը պետական աջակցության տրամադրման հարցերում որոշումներ են կայացնում:

Լրավճար տրամադրող մարմինը կարող է, համաձայն Կողմ պետությունների օրենսդրության, լիազորված գործակալի (կամ ցանկացած այլ կազմակերպության) հանձնարարել կամ վերապահել իր վրա դրված մեկ կամ մի քանի այնպիսի գործառույթների իրականացումը, որոնք վերաբերում են գյուղատնտեսությանը պետական աջակցության միջոցների տրամադրմանը: Լիազորված գործակալի այդպիսի գործողությունները դիտարկվում են որպես լրավճար տրամադրող մարմնի գործողություններ:

Կողմ պետության նախագահի՝ գյուղատնտեսությանը պետական աջակցության միջոցների տրամադրմանն ուղղված գործողությունները դիտարկվում են որպես լրավճար տրամադրող մարմնի գործողություններ:

Հոդված 3

Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցների դասակարգումն ըստ առևտրի վրա խաթարող ազդեցության

1. Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցները ստորաբաժանվում են՝

1) Կողմ պետությունների՝ գյուղատնտեսական ապրանքների փոխադարձ առևտրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցների (այսուհետ՝ «առևտրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցներ»),

2) Կողմ պետությունների գյուղատնտեսական ապրանքների առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցների (այսուհետ՝ «առևտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ»),

3) Կողմ պետությունների գյուղատնտեսական ապրանքների փոխադարձ առևտրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ (այսուհետ՝ «առևտրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ»):

2. Առևտրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցները սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող թիվ 3 հավելվածում նշված միջոցներն են:

3. Առևտուրն առավելապես խաթարող միջոցներն են՝

գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցներ, որոնց տրամադրումը պայմանավորվում է պետական աջակցության այդ միջոցը տրամադրող՝ Կողմ պետության տարածքից ցանկացած այլ Կողմ պետության տարածք գյուղատնտեսական ապրանքի՝ իրականացված կամ ապագայում հնարավոր արտահանման արդյունքներով, որոնք պետական աջակցության տրամադրման միակ պայմանն են կամ մի քանի պայմաններից մեկն են: Այդպիսի աջակցության միջոցների բացատրական ցանկը ներկայացված է սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող թիվ 4 հավելվածում;

գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միջոցները, որոնց տրամադրումը պայմանավորվում է բացառապես գյուղատնտեսությանը պետական աջակցության այդ միջոցը տրամադրող Կողմ պետության ծագման գյուղատնտեսական ապրանքների՝ այդ Կողմ պետության տարածքում գյուղատնտեսական ապրանքների

արտադրության ժամանակ օգտագործմամբ, որը պետական աջակցության տրամադրման միակ պայմանն է կամ մի քանի պայմաններից մեկն է:

4. Առետուրը խաթարող միջոցներն այն միջոցներն են, որոնք չեն կարող դասվել առետրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցների շարքին, կամ սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերում նշված՝ առետրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցների շարքին:

Հոդված 4

Առետրի վրա խաթարող ազդեցություն չունեցող միջոցների կիրառումը

Կողմերը կարող են առանց սահմանափակման կիրառել առետուրը չխաթարող միջոցներ:

Հոդված 5

Առետրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ

Կողմերը չպետք է առետրի վրա առավելապես խաթարող ազդեցություն ունեցող միջոցներ կիրառեն:

Հոդված 6

Առետրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցների կիրառումը

1. Առետրի վրա խաթարող ազդեցություն ունեցող միջոցների մակարդակը, որը հաշվարկվում է որպես գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության տոկոսային հարաբերություն արտադրված գյուղատնտեսական ապրանքների ամբողջությամբ վերցված արժեքի նկատմամբ, սահմանվում է որպես թույլատրված ծավալ եւ չպետք է գերազանցի 10 տոկոսը:

2. Բելառուսի Հանրապետության համար սահմանվում է անցումային շրջան մինչեւ 2016 թվականը, որի ընթացքում Բելառուսի Հանրապետությունը պարտավորվում է նվազեցնել թույլատրված ծավալը հետեւյալ կերպ.

2011 թվականին՝ 16 տոկոս,

2012 թվականին՝ 15 տոկոս,

2013 թվականին՝ 14 տոկոս,

2014 թվականին՝ 13 տոկոս,

2015 թվականին՝ 12 տոկոս,

2016 թվականին՝ 10 տոկոս:

3. Պետության՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը միանալուց հետո, սույն հոդվածի 1-ին կետում նշված միջոցների մակարդակը սահմանվում է այդ պետության՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության առջեւ ստանձնած պարտավորության սահմաններում:

Հոդված 7

Ծանուցումը

1. Կողմերը միմյանց գրավոր կերպով ծանուցում են հերթական տարվա ընթացքում դաշնային եւ (կամ) հանրապետական մակարդակով իրականացվելիք՝ գյուղատնտեսությանը պետական աջակցության տրամադրմանն ուղղված բոլոր նախատեսվող ծրագրերի մասին: Ծանուցագիրը պետք է բավականաչափ տեղեկություններ պարունակի, որպեսզի յուրաքանչյուր Կողմի լիազոր մարմինները կարողանան գնահատել Կողմերի կողմից գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության չափը եւ դրա համապատասխանությունը սույն Համաձայնագրին: Կողմերը չեն փոխանցում գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության մասին ամբողջ տեղեկատվությունը սահմանափակ մատչելիությամբ տեղեկատվության բաժին: Կողմերը միմյանց եւ Մաքսային միության Հանձնաժողով ծանուցագրեր են ներկայացնում յուրաքանչյուր տարի, ոչ ուշ, քան ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը:

2. Կողմերը միմյանց ուղարկում են սույն հոդվածի 1-ին կետում նշված ծանուցագրեր, որոնք պարունակում են դաշնային եւ հանրապետական բյուջեի նախագծերի ծախսային մասեր՝ տրամադրվող ըստ բաժինների, ենթաբաժինների եւ ծախսերի գործառական ու գերատեսչական դասակարգման տեսակների, ինչպես նաեւ՝ գյուղատնտեսությանը պետական աջակցության տրամադրման կարգի եւ ծավալների վերաբերյալ նորմեր՝ այդպիսի նախագծերը Կողմ պետությունների օրենսդրական իշխանության բարձրագույն մարմիններ ներկայացնելու ժամանակ: Մի Կողմ պետության դաշնային կամ

հանրապետական բյուջեի նախագծում փոփոխության դեպքում՝ դրա մեջ գյուղատնտեսությանը տրամադրվող աջակցության որեւէ ծրագիր ներառելու կամ դրանից բացառելու նպատակով, համապատասխան Կողմը մյուս Կողմերին գրավոր կերպով ծանուցում է այդ մասին՝ նախագծի մեջ փոփոխություններ կատարելուց ոչ ուշ քան 30 օր հետո:

Այն դեպքում, երբ մի Կողմ պետության ընթացիկ տարվա դաշնային կամ հանրապետական բյուջեում կատարվում են գյուղատնտեսությանը պետական աջակցության տրամադրմանը վերաբերող փոփոխություններ, այդ Կողմն այդ մասին գրավոր կերպով ծանուցում է մյուս Կողմերին՝ այդպիսի փոփոխությունների ուժի մեջ մտնելուց նվազագույնը 20 օր առաջ:

3. Կողմ պետությունների վարչատարածքային միավորների բյուջեները հրատարակվում կամ հրապարակվում են ցանկացած այլ եղանակով: Կողմը կամ դրա կողմից լիազորված մարմինը ցանկացած Կողմի հարցման հիման վրա պետք է տրամադրի այդպիսի տեղեկատվության աղբյուրների ցանկ:

4. Կողմերի լիազոր մարմինները միմյանց ծանուցումներ են ուղարկում հաշվետու տարվա ընթացքում իրենց պետությունների տարածքում գյուղատնտեսությանը տրամադրված պետական աջակցության վերաբերյալ՝ ընթացիկ տարվա՝ համապատասխանաբար դաշնային կամ հանրապետական բյուջեի, ինչպես նաեւ վարչատարածքային միավորների բյուջեների կատարման մասին օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում: Ծանուցագիրը պետք է բավականաչափ տեղեկություններ պարունակի, որպեսզի յուրաքանչյուր Կողմի լիազոր մարմինները կարողանան գնահատել գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության գումարը եւ դրա համապատասխանությունը սույն Համաձայնագրի դրույթներին:

5. Կողմերը համաձայնեցնում են սույն հոդվածի 4-րդ կետում նշված ծանուցագրերի ներկայացման ձեւաչափը:

Հոդված 8

Կողմերի պատասխանատվությունը

Այն դեպքում, երբ Կողմերից մեկը խախտում է սույն Համաձայնագրի 5-րդ կամ 6-րդ հոդվածի դրույթները, այդ Կողմն անհապաղ եւ անվերապահորեն դադարեցնում է այնպիսի միջոցների տրամադրումը, որոնք առավելապես խաթարող ազդեցություն են գործում

առեւտրի վրա, կամ այն միջոցների տրամադրումը, որոնք առեւտրի վրա թույլատրված ծավալից ավելի խաթարող ազդեցություն են գործում, եւ մյուս Կողմերին վճարում է փոխհատուցում՝ առեւտրի վրա առավելապես խաթարող ազդեցություն գործող աջակցության միջոցների ծավալի կամ թույլատրված ծավալի գերազանցման չափով: Այն դեպքում, երբ փոխհատուցումը չի վճարվել Կողմերի կողմից համաձայնեցված ժամկետներում, յուրաքանչյուր կողմ իրավունք ունի սահմանել փոխհատուցման միջոցներ՝ իր պետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 9

Վեճերի լուծումը

1. Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, Կողմերի միջեւ բանակցությունների եւ խորհրդակցությունների անցկացման միջոցով: Եթե վեճը բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով չի կարգավորվում դրանց անցկացման վերաբերյալ վեճը նախաձեռնած Կողմի կողմից պատասխանող Կողմին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքը ներկայացնելու օրվանից սկսած օրացուցային 60 օրվա ընթացքում, ապա հայցվոր Կողմն իրավունք ունի դիմելու Համայնքի դատարան կամ նախաձեռնելու Հաշտեցման հանձնաժողովի ստեղծում:

2. Այն դեպքում, երբ հայցվոր Կողմը վեճը Հաշտեցման հանձնաժողովում կարգավորելու որոշում է կայացնում, այն միջնորդություն է ուղարկում պատասխանող Կողմին:

3. Հաշտեցման հանձնաժողովը ժամանակավոր է եւ ստեղծվում է կոնկրետ վեճը կարգավորելու համար: Վեճը կարգավորելուց հետո Հաշտեցման հանձնաժողովը կազմալուծվում է:

4. Եթե Կողմերն այլ համաձայնություն ձեռք չեն բերում, ապա Հաշտեցման հանձնաժողովն իր լիազորությունների համաձայն՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի համապատասխան դրույթները՝ քննում է վեճի կարգավորման հարցն այնպես, ինչպես նշված է Կողմերից ցանկացածի միջնորդության մեջ, եւ եզրակացություն է կայացնում առաջարկվող միջոցների՝ սույն Համաձայնագրին համապատասխանության մասին:

5. Ցանկացած Կողմ կարող է սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված ցանկացած վեճ փոխանցել Հաշտեցման հանձնաժողովի քննությանը: Հայցվոր կողմը միջնորդության մեջ նշում է այն միջոցները կամ գործելակերպը, որն իր կարծիքով առնչվում է այդ վեճին, եւ այդ միջնորդությունը մյուս Կողմին է ներկայացնում իր միջնորդի նշանակման մասին ծանուցագրի հետ մեկտեղ: Հայցվոր Կողմը նաեւ առաջադրում է թվով մինչեւ 3 թեկնածու՝ Հաշտեցման հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար:

Մյուս կողմը 15 օրացուցային օրվա ընթացքում նշանակում է երկրորդ միջնորդին եւ առաջարկում է թվով մինչեւ 3 թեկնածու Հաշտեցման հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար:

Երկու Կողմերը ձգտում են Հաշտեցման հանձնաժողովի նախագահի թեկնածության վերաբերյալ համաձայնության գալ երկրորդ միջնորդին նշանակելուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում:

6. Եթե Կողմերն ի վիճակի չեն նախագահի թեկնածության վերաբերյալ համաձայնության գալ երկրորդ միջնորդի նշանակումից հետո 20 օրացուցային օրվա ընթացքում, ապա նրան 7 օրացուցային օրվա ընթացքում վիճակահանությամբ ընտրում են Կողմերի ներկայացուցիչները՝ այն անձանց թվից, որոնք ընդգրկված են սույն հոդվածի 9-րդ կետում նշված նախնական ցուցակում եւ որոնք վեճի մասնակից Կողմ պետությունների քաղաքացիներ չեն:

7. Հաշտեցման հանձնաժողովը կազմված է 3 անդամից (վեճի մասնակից Կողմերից յուրաքանչյուրի միջնորդներից եւ նախագահից): Հաշտեցման հանձնաժողով ստեղծելու ամսաթիվը նախագահին նշանակելու ամսաթիվն է:

8. Անձինք, որոնք պատրաստ են եւ ունակ՝ հանդես գալու որպես Հաշտեցման հանձնաժողովի միջնորդներ եւ անդամներ, պետք է ունենան հատուկ գիտելիքներ կամ փորձ՝ իրավունքի, միջազգային առետրի, ինչպես նաեւ այլ բնագավառներում, որոնք առնչվում են միջազգային առետրի բնագավառում միջազգային պայմանագրերի հետ կապված վեճերի կարգավորմանը: Նրանք պետք է հանդես գան անձամբ, այլ ոչ որպես Կողմ պետությունների կամ որեւէ կազմակերպության ներկայացուցիչներ, գործեն լիովին անկախ, Կողմերից ոչ մեկի հետ չեն կարող կապված լինել կամ նրանցից որեւէ հրահանգներ ստանալ: Հաշտեցման հանձնաժողովի անդամների առավելագույնը մեկ երրորդը կարող են լինել Կողմ պետությունների քաղաքացիներ:

9. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվանից ոչ ուշ, Կողմերը կազմում են 15-ից անձը չգերազանցող նախնական ցուցակ, որոնք պատրաստ են եւ ունակ՝ հանդես գալու որպես միջնորդներ, ընդ որում՝ նրանցից 5-ը չպետք է լինեն Կողմ պետությունների քաղաքացիներ:

10. Հաշտեցման հանձնաժողովի ընդունած որոշումները պարտադիր են Կողմերից յուրաքանչյուրի կողմից կատարման համար:

11. Կողմերն ապահովում են վեճերի քննության արդյունքների հրապարակայնությունը:

12. Վեճերը քննվում են, եւ բոլոր որոշումները կայացվում են գործընթացի մասնակից Կողմերի հավասարության սկզբունքի հիման վրա:

13. Հաշտեցման հանձնաժողովը, Կողմի հարցման հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ, կարող է պահանջել տեղեկություններ կամ տեխնիկական խորհրդատվություն ցանկացած այն անձից կամ մարմնից, որին ինքն անհրաժեշտ է համարում՝ Կողմերի համաձայնության առկայության դեպքում եւ այն պայմաններով, որոնց շուրջ կարող են համաձայնության գալ Կողմերը:

14. Հաշտեցման հանձնաժողովի անդամները չեն հանդիպում Կողմերից ոչ մեկի հետ եւ որեւէ Կողմի հետ չեն ունենում որեւէ հարաբերություն՝ մյուս Կողմի բացակայության դեպքում: Միջնորդներից ոչ մեկը չի կարող քննարկել վեճի առարկայի բովանդակությունը՝ մի Կողմի կամ երկու Կողմերի հետ՝ մյուս միջնորդների բացակայությամբ:

15. Հաշտեցման հանձնաժողովը սույն Համաձայնագրի դրույթները մեկնաբանում է՝ միջազգային հանրային իրավունքի նորմերին համապատասխան:

16. Այն Կողմը, որը պնդում է, թե մյուս Կողմի ձեռնարկած միջոցը չի համապատասխանում սույն Համաձայնագրի դրույթներին, ստանձնում է այդ անհամապատասխանությունն ապացուցելու պատասխանատվությունը:

17. Եթե Հաշտեցման հանձնաժողովը գալիս է այն եզրահանգմանը, որ Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, չի կատարել սույն Համաձայնագրից բխող իր պարտավորությունները, ապա այն իր որոշման մեջ նշում է պատասխանող Կողմի կողմից այդ խախտումների վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, եւ իր կողմից տրված առաջարկությունների իրականացման համար ողջամիտ ժամկետը, որը չի կարող գերազանցել 1 օրացույցային տարին:

18. Պատասխանող Կողմը պետք է անհապաղ դադարեցնի սույն Համաձայնագրից բխող իր պարտավորությունները խախտելը՝ Հաշտեցման հանձնաժողովի որոշումները բարեխղճորեն կատարելու միջոցով:

19. Այն դեպքում, երբ Հաշտեցման հանձնաժողովի որոշումները չեն կատարվում սահմանված ժամանակահատվածում կամ եթե Հաշտեցման հանձնաժողովը որոշում է, որ այն միջոցները, որոնց մասին տեղեկացրել է պատասխանող Կողմը, չեն համապատասխանում սույն Համաձայնագրի դրույթներին, Հաշտեցման հանձնաժողովը վեճը նախաձեռնած Կողմին իրավունք է տալիս ձեռնարկելու համաչափ պատասխան միջոցներ: Պատասխան միջոցների ծավալը, համաչափությունը եւ կիրառման ժամկետը որոշում է Հաշտեցման հանձնաժողովը:

20. Պատասխան միջոցները ժամանակավոր բնույթ են կրում եւ կիրառվում են հայցվոր Կողմի կողմից միայն այնքան ժամանակ, քանի դեռ սույն Համաձայնագրի նորմերը խախտող միջոցը չեղյալ չի հայտարարվել կամ փոփոխվել այնպես, որ համապատասխանի սույն Համաձայնագրի դրույթներին, կամ քանի դեռ Կողմերը համաձայնության չեն եկել վեճի կարգավորման շուրջ:

21. Հաշտեցման գործընթացի ծախսերը Կողմերը կրում են հավասարաչափ: Բոլոր այլ ծախսերը, որոնք կրում է ցանկացած Կողմը, հոգում է տվյալ Կողմը:

Հոդված 10

Մաքսային միության հանձնաժողովի լիազորությունները

Մաքսային միության հանձնաժողովին վերապահվում են հետևյալ լիազորությունները՝

1) մշտադիտարկման եւ համեմատախրավական վերլուծության իրականացում՝ յուրաքանչյուր Կողմ պետության համապատասխան օրենսդրության վերաբերյալ՝ սույն Համաձայնագրի առարկային համապատասխանելու մասով, ինչպես նաեւ՝ Կողմերի կողմից դրա դրույթների պահպանման մասին տարեկան հաշվետվությունների պատրաստում,

2) աջակցության տրամադրում՝ Կողմերի խորհրդակցությունների կազմակերպման գործընթացում՝ Կողմ պետությունների օրենսդրության ներդաշնակեցում եւ համապատասխանեցում իրականացնելու հարցերով,

Հոդված 11

Փոփոխությունները

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեակերպվում են արձանագրություններով:

Հոդված 12

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարելու մասին ավանդապահի կողմից վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9-ին, մեկ օրինակով՝ ռուսերեն լեզվով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրացիոն կոմիտեում, որը յուրաքանչյուր Կողմին կուղարկի դրա հաստատված օրինակը:

Բելառուսի	Ղազախստանի	Ռուսաստանի
Հանրապետության	Հանրապետության	Դաշնության
Կառավարության կողմից՝	Կառավարության կողմից՝	Կառավարության կողմից՝
(ստորագրություն)	(ստորագրություն)	(ստորագրություն)

«Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միասնական կանոնների մասին» համաձայնագրի

ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ

Սույն Համաձայնագրով ընդգրկվում են Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության՝ Մաքսային միության Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (ՄՄ ԱՏԳ ՄԱԱ) հետեւյալ ապրանքները՝

ՄՄ ԱՏԳ ԱԱ 01 - 24 խմբեր, բացառությամբ 03 խմբի (ծկներ եւ խեցեմորթներ, կակղամորթներ եւ ջրային այլ անողնաշարավորներ), 1604 (պատրաստի կամ պահածոյացված ձուկ. թառափազգիների ձկնկիթ եւ դրա փոխարինիչներ՝ պատրաստած ձկնկիթից) եւ 1605(պատրաստի կամ պահածոյացված խեցեմորթներ, կակղամորթեր եւ ջրային այլ անողնաշարավորներ) ապրանքային դիրքերի.

ՄՄ ԱՏԳ ԱԱ 2905 43 000 0 ենթադիրք (մաննիս).

ՄՄ ԱՏԳ ԱԱ 2905 44 ենթադիրք, D-գլյուցիտ (սորբիտ).

ՄՄ ԱՏԳ ԱԱ 3301 ապրանքային դիրք (եթերայուղեր (տերպեններ պարունակող կամ չպարունակող) ներառյալ էքստրակտները եւ բացարձակ յուղերը. ռետինանյութեր. լուծամզված եթերայուղեր. եթերայուղերի խտանյութեր՝ ճարպերի, չցնդող յուղերի, մոմերի կամ համանման նյութերի մեջ՝ ստացված անֆլերաժի կամ թթվամշակման մեթոդով. եթերայուղերի տերպենազերծումից ստացված տերպենային կողմնակի արգասիքներ. եթերայուղերի ջրային թորվածքներ եւ ջրային լուծույթներ.)

ՄՄ ԱՏԳ ԱԱ 3501 - 3505 ապրանքային դիրքեր (կազեին, կազեինատներ եւ կազեինի այլ ածանցյալներ, կազեինային սոսինձներ. ալբումիններ (ներառյալ երկու կամ ավելի շիճուկային սպիտակուցների խտածոները, որոնք պարունակում են չոր նյութի հաշվարկով 80 զանգ.%-ից ավելի շիճուկային սպիտակուցներ), ալբումինատներ եւ ալբումինի այլ ածանցյալներ. ժելատին (այդ թվում ուղղանկյուն (ներառյալ քառակուսի) թերթերով՝

մակերեսային մշակմամբ կամ առանց մշակման, ներկած կամ չներկած) եւ ժելատինի ածանցյալները. ձկնասոսինձ. կենդանական ծագման այլ սոսինձներ(բացառությամբ 3501 ապրանքային դիրքի կազեինային սոսինձների). պեպտոններ եւ դրանց ածանցյալները. սպիտակուցային այլ նյութեր եւ դրանց ածանցյալները՝ այլ տեղում չհիշատակված կամ չընդգրկված. կաշվի կամ հում կաշվի փոշի քրոմապատված կամ չքրոմապատված. դեքստրիններ եւ այլ վերափոխված օսլաներ (օրինակ՝ օսլաներ նախապես ժելատինացված կամ վերածված բարդ եթերի). սոսինձներ ստացված օսլաների, դեքստրինների կամ վերափոխված այլ օսլաների հիմքի վրա, բացառությամբ 3503 00 8001 (չոր ձկնասոսինձ) եւ 3503 00 800 2 (հեղուկ ձկնասոսինձ) ապրանքային դիրքերի).

ՄՄ ԱՏԳ ԱԱ 3809 10 ենթադիրք (հարդարման միջոցներ, ներկումն արագացնելու կամ ներկանյութերը սեւեռակելու միջոցներ եւ այլ նյութեր եւ պատրաստուկներ (օրինակ՝ մշակման եւ խաճատման նյութեր), որոնք կիրառվում են մանածագործական, թղթի, կաշվի արդյունաբերության մեջ կամ համանման ճյուղերում, այլ տեղում չհիշատակված կամ չընդգրկված, օսլայանման նյութերի հիմքով).

ՄՄ ԱՏԳ ԱԱ 3824 60 ենթադիրք (սորբիտ, բացի 2905 44 ենթադիրքում նշված սորբիտը).

ՄՄ ԱՏԳ ԱԱ 4101 - 4103 ապրանքային դիրքեր (խոշոր եղջերավոր անասունների(այդ թվում գոմեշների) կամ ձիազգի կենդանիների չմշակված մորթիներ (թարմ կամ աղադրված, չոր, մոխրած, աղջրած կամ այլ կերպ կոնսերվացված, բայց չդաբաղած, չմազաղաթացրած եւ հետագա մշակման չենթարկված), մազածածկույթով կամ առանց մազածածկույթի, երկտակված կամ չերկտակված. չմշակված՝ ոչխարների մորթիներ կամ գառների մորթիներ (թարմ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ կոնսերվացված, բայց չդաբաղած, չմազաղաթացրած եւ հետագա մշակման չենթարկված), բրդե ծածկույթով կամ առանց բրդեծածկույթի, երկտակված կամ չերկտակված, բացի տվյալ խմբի 1 գ ծանոթագրությամբ բացառվածները. այլ չմշակված մորթիներ (թարմ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ կոնսերվացված, բայց չդաբաղած, չմազաղաթացրած եւ հետագա մշակման չենթարկված), մազածածկույթով կամ առանց մազածածկույթի, երկտակված կամ չերկտակված, բացառությամբ տվյալ խմբի 1(բ) կամ 1(գ) ծանոթագրություններով բացառվածները.

ՄՄ ԱՏԳ ԱԱ 4301 ապրանքային դիրք (մուշտակամորթ հումք (ներառյալ գլուխները, պոչերը, թաթերը եւ այլ մասերը կամ կտորտանքը՝ պիտանի մորթեղենի արտադրության

համար), բացառությամբ 4101, 4102 կամ 4103 ապրանքային դիրքերում նշված չմշակված մորթիների)։

ՄՄ ԱՏԳ ԱԱ 5001 00 000 0 - 5003 00 000 0 ապրանքային դիրքերը (շերամի բոժոժ, ետ կծկելու համար պիտանի. հումք-մետաքս (չոլորած). մետաքսի մնացուկներ (ներառյալ կծկելու համար ոչ պիտանի բոժոժները, բոժոժաթելի մնացորդները եւ փխրունացրած հումքը)։

ՄՄ ԱՏԳ ԱԱ 5101 - 5103 ապրանքային դիրքերը (բուրդ, սանդերքագզման կամ սանրագզման չենթարկած. կենդանիների մազ՝ բարակ կամ կոշտ, սանդերքագզման կամ սանրագզման չենթարկած. կենդանիների բրդի կամ բարակ կամ կոշտ մազի մնացորդներ՝ ներառյալ մանվածքային մնացուկները, բայց բացառելով փխրունացրած հումքը.)

ՄՄ ԱՏԳ ԱԱ 5201 00 - 5203 00 000 0 ապրանքային դիրքեր (բամբակի մանրաթել, սանդերքագզման կամ սանրագզման չենթարկած. բամբակի մանրաթելի մնացորդներ (ներառյալ մանվածքային մնացուկներն ու փխրունացրած հումքը). բամբակի մանրաթել, սանդերքագզման կամ սանրագզման ենթարկած)։

ՄՄ ԱՏԳ ԱԱ 5301 ապրանքային դիրք (վուշ-հումք կամ վուշ՝ մշակված, բայց չմանված. վուշի քուլք եւ մնացորդներ(ներառյալ մանվածքային մնացուկները եւ փխրունացրած հումքը))։

ՄՄ ԱՏԳ ԱԱ 5302 ապրանքային դիրք (կանեփի մանրաթել (*cannabis sativa* L.)), չմշակված կամ մշակված, բայց չմանած. կանեփաթելի քուլք եւ մնացորդներ (ներառյալ մանվածքային մնացուկները եւ փխրունացրած հումքը)։

«Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միասնական կանոնների մասին» համաձայնագրի

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ

1. Դրամային միջոցների ուղղակի փոխանցում

Աջակցության ծավալը հաշվարկվում է որպես անհատույց տրամադրվող՝ հատկացված եւ փաստացի ստացված միջոցների (օրինակ՝ դոտացիաների, փոխհատուցման եւ այլնի տեսքով) գումար, կամ, եթե միջոցները տրամադրվում են վերադարձելիության հիմունքներով՝ շուկայում(բանկային վարկերի, պարտատոմսերի եւ այլնի շուկա) ձեւավորված պայմաններից ավելի բարենպաստ պայմաններով, աջակցության ծավալը սահմանվում է որպես տարբերություն այն գումարի, որը կպահանջվեր վճարել տվյալ միջոցների օգտագործման դիմաց՝ դրանք շուկայում ստանալու դեպքում, եւ փաստացի վճարված գումարի միջեւ:

2. Պարտավորության կատարման երաշխիքի տրամադրում (օրինակ՝ փոխատվությունների եւ փոխառությունների գծով երաշխիքներ):

Պարտավորության կատարման համար տրամադրված երաշխիքի մասով աջակցության ծավալը պետք է սահմանվի որպես տարբերություն այն գումարի միջեւ, որը կպահանջվեր վճարել՝ ելնելով ապահովագրական ծառայությունների հասանելի շուկայում համապատասխան պարտավորության չկատարման ռիսկի ապահովագրության սակագնից, եւ այն գումարի միջեւ, որը պետք է վճարվի լրավճարը տրամադրող մարմնին երաշխիքի տրամադրման համար:

Երաշխիքի կատարման բյուջետային ծախսերը ներառվում են աջակցության ծավալի մեջ՝ սույն կետի 1-ին մասին համապատասխան հաշվարկված մակարդակը գերազանցող գումարի չափով:

Կողմերը 7-րդ հոդվածում նախատեսված ծանուցագրերի մեջ ներառում են տեղեկատվություն, որը թույլ է տալիս գնահատել պետական աջակցության մակարդակը՝ պարտավորությունների կատարման պետական երաշխիքների տրամադրման մասով:

3. Ապրանքի, ծառայության, արժեթղթերի, ձեռնարկության (գույքային համալիրի) կամ դրա մի մասի, կազմակերպության կանոնադրական ֆոնդի մասնաբաժնի (ներառյալ բաժնետոմսերի ձեռքբերումը), այլ գույքի, մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների եւ այլնի ձեռքբերումը շուկայականից բարձր գնով:

Աջակցության ծավալը հաշվարկվում է որպես տարբերություն ձեռքբերված օբյեկտների համար փաստացի վճարված գումարի եւ այն գումարի միջեւ, որը կպահանջվեր որ վճարվեր տվյալ օբյեկտների համար շուկայում ձեւավորված գներով:

Պետության ծախսերը՝ ուղղված բաժնետոմսերի ձեռքբերմանը, ձեռնարկության կանոնադրական կապիտալում իր մասնաբաժնի ավելացմանը եւ այլնի, որոնցով պահպանում են սովորական ներդրումային գործելակերպի պայմանները, չեն դասվում պետական աջակցության միջոցների շարքին:

4. Պետության եւ վարչատարածքային միավորների վճարման ենթակա բյուջետային եկամուտների գանձումից լրիվ կամ մասնակի հրաժարում (օրինակ՝ բյուջե վճարումների մասով պարտքի դուրսգրում եւ այլն):

Աջակցության ծավալը համապատասխանում է գյուղատնտեսական ապրանքի արտադրողի կողմից բյուջեի մասով չկատարված ֆինանսական պարտավորությունների գումարին՝ ներառյալ այն պարտավորությունների, որոնք կառաջանային այն դեպքում, երբ աջակցությունը չի տրամադրվում: Պարտավորության կատարման հետաձգման դեպքում աջակցության ծավալը սահմանվում է որպես գումար, որն անհրաժեշտ է վճարել տոկոսների տեսքով՝ հետաձգված պարտավորությանը հավասար քանակությամբ հասանելի վարկային շուկայում ստացված փոխառության միջոցների օգտագործման համար:

5. Ապրանքների կամ ծառայությունների արտոնյալ պայմաններով կամ անհատույց տրամադրում:

Աջակցության ծավալը սահմանվում է որպես տարբերություն ապրանքների կամ ծառայությունների շուկայական արժեքի եւ դրանց ձեռքբերման (տրամադրման) համար փաստացի վճարված գումարի միջեւ:

6. Գնային աջակցություն, որը միավորում է շուկայական գների մակարդակի պահպանմանն ուղղված միջոցները:

Գնային աջակցության ծավալը սահմանվում է որպես արտադրյալ՝ այն գյուղատնտեսական ապրանքի քանակության, որի նկատմամբ կիրառվում են կարգավորվող գներ կամ գների կարգավորման միջոցներ, եւ կարգավորվող ներքին գնի եւ համաշխարհային հենանիշային գնի տարբերության՝ տեղեկատվության ճշգրտմամբ՝ կախված ապրանքների (օրինակ՝ կաթի բազիսային յուղայնություն) որակից եւ վերամշակման աստիճանից: Գների պահպանմանն ուղղված բյուջետային ծախսերը (օրինակ՝ գնման եւ պահպանման ծախսեր) աջակցության ծավալի մեջ չեն ներառվում:

«Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միասնական կանոնների մասին» համաձայնագրի

ԿՈՂՄԵՐԻ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌԵՎՏՐԻ ՎՐԱ ԽԱԹԱՐՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Գյուղատնտեսական ապրանքների արտադրողներին (այսուհետ՝ «արտադրողներ») տրամադրվող պետական աջակցության միջոցները, որոնք բացասական ազդեցություն չունեն Կողմերի՝ գյուղատնտեսական ապրանքների փոխադարձ առևտրի վրա, պետք է համապատասխանեն հետևյալ հիմնական չափանիշներին.

աջակցությունը տրամադրվում է բյուջեի միջոցների հաշվին (ներառյալ չբաշխված եկամուտները), այդ թվում՝ պետական ծրագրերի շրջանակներում, սակայն ոչ սպառողների միջոցների հաշվին,

աջակցությունը չպետք է ունենա արտադրողների գների պահպանման հետեանք:

Չբաշխված եկամուտների տակ հասկացվում է բյուջե վճարման ենթակա պարտադիր վճարներից վերջնական կամ ժամանակավոր հրաժարում:

1. Ծառայությունների մատուցման պետական ծրագրեր:

Ընդհանուր բնույթի ծառայություններ

Այդ տեսակի միջոցներով նախատեսվում է միջոցների (կամ չբաշխված եկամուտների) հատկացում, որոնք ուղղված են այնպիսի ծրագրերի կատարմանը, որոնց հիմքի վրա գյուղատնտեսությանը կամ գյուղացիներին տրամադրվում են ծառայություններ կամ արտոնություններ՝ բացառությամբ գյուղատնտեսական ապրանքներն արտադրողներին կամ վերամշակողներին կատարվող ուղղակի վճարումների: Այդպիսի ծրագրերը պետք է համապատասխանեն սույն հավելվածում նշված հիմնական չափանիշներին եւ կարող են իրականացվել հետևյալ ուղղություններով՝

1) գիտական հետազոտություններ՝ այդ թվում ընդհանուր բնույթի. շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծրագրերի հետ կապված հետազոտություններ եւ կոնկրետ արտադրատեսակներին վերաբերող հետազոտական ծրագրեր,

2) պայքար վնասատուների եւ հիվանդությունների դեմ՝ ներառյալ վնասատուների եւ հիվանդությունների դեմ պայքարի ընդհանուր միջոցներ, ինչպես նաեւ կոնկրետ ապրանքին վերաբերող միջոցներ, ինչպես, օրինակ՝ վաղ կանխազգուշացման համակարգեր, կարանտին եւ ոչնչացում,

3) կադրերի ընդհանուր եւ հատուկ պատրաստում,

4) տեղեկատվության տարածում, խորհրդատվական ծառայություններ՝ ներառյալ արտադրողներին եւ սպառողներին տեղեկատվության եւ արդյունքների փոխանցման դյուրինացմանն ուղղված միջոցների տրամադրումը,

5) տեսչական ծառայություններ՝ ներառյալ ընդհանուր տեսչական ծառայությունները եւ առանձին գյուղատնտեսական ապրանքների ստուգումը՝ առողջապահական, անվտանգության, ստանդարտացման եւ ըստ որակի տեսակավորման նպատակով,

6) շուկայահանման եւ գյուղատնտեսական ապրանքների առաջխաղացման ծառայություններ՝ ներառյալ շուկայահանմանը վերաբերող տեղեկատվությունը, խորհրդատվությունները եւ կոնկրետ գյուղատնտեսական ապրանքների առաջխաղացումը (բացառությամբ ոչ կոնկրետ նպատակներին ուղղված ծախսերի, որոնք, սակայն, կարող են վաճառողների կողմից օգտագործվել գյուղատնտեսական ապրանքների իրացման գների նվազեցման եւ գնորդներին ուղղակի տնտեսական արտոնությունների տրամադրման համար),

7) ենթակառուցվածքին առնչվող ծառայություններ՝ ներառյալ էլեկտրամատակարարումը, ճանապարհները եւ հաղորդակցության այլ ուղիները, շուկաների եւ նավահանգիստների սարքավորումները, ջրամատակարարումը, ամբարտակները եւ ցամաքուրդային (դրենաժային) համակարգերը, ենթակառուցվածքի ստեղծմանն ուղղված աշխատանքները՝ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծրագրերի զուգակցմամբ:

Միջոցները բոլոր դեպքերում ուղղվում են միայն ընդհանուր օգտագործման ենթակառուցվածքի կապիտալ շինությունների եւ հանրամատչելի օբյեկտների սարքավորումներով համալրմանը եւ շինարարությանը՝ բացառությամբ միջոցների, որոնք

ուղղվում են շահագործման ծախսերի կամ արտոնություններ ունեցող սպառողների սպասարկումից չստացված եկամտի վճարմանը:

2. Պարենային անվտանգության ապահովման համար պետական պահուստների ստեղծումը:

Պարենի պաշարների կուտակման եւ պահպանման նպատակներով տրամադրվող միջոցները (կամ չբաշխված եկամուտները), հատկացվում են Կողմ պետության ներպետական օրենսդրությամբ սահմանված՝ պարենային անվտանգության ապահովման ծրագրի շրջանակներում:

Այդպիսի պահուստների ծավալը եւ կուտակումը համապատասխանում են բացարձակապես պարենային անվտանգությանը վերաբերող՝ նախապես սահմանված նպատակներին: Պահուստների կուտակման եւ բաշխման գործընթացը ֆինանսական ծախսերի առումով պետք է լինի թափանցիկ: Պետական իշխանության լիազոր մարմինները պարենի գնումներ են իրականացնում ընթացիկ շուկայական գներով, իսկ պարենային պահուստներից վաճառք՝ համապատասխան որակի կոնկրետ արտադրատեսակի ընթացիկ ներքին շուկայական գներից ոչ ցածր գներով:

3. Ներքին պարենային օգնություն:

Ներքին պարենային օգնություն՝ միջոցներ (կամ չբաշխված եկամուտներ), որոնք ուղղվում են բնակչության կարիքավոր հատվածին ներքին պարենային օգնության տրամադրմանը:

Պարենային օգնություն ստանալու իրավունքն առնչվում է Կողմ պետության ներպետական օրենսդրությամբ սահմանված՝ պարենային ապահովվածությանը վերաբերող չափանիշներին: Այդպիսի օգնությունը տրամադրվում է շահագրգիռ անձանց պարենի ուղղակի առաքումների կամ շուկայական կամ լրավճարված գներով նրանց կողմից պարենի ձեռք բերման համար միջոցների տրամադրման ձեւով: Պետական իշխանության լիազոր մարմիններն իրականացնում են պարենի գնումներն ընթացիկ շուկայական գներով, իսկ ֆինանսավորումը եւ բաշխումը թափանցիկ են:

Ուղղակի վճարումներ արտադրողներին:

Ուղղակի վճարումների տեսքով արտադրողներին տրամադրվող աջակցությունը (կամ չբաշխված եկամուտները՝ ներառյալ բնափրային արտահայտությամբ վճարները) պետք է համապատասխանի սույն հավելվածում նշված չափանիշներին, ինչպես նաեւ՝ որոշակի այլ

չափանիշներին, որոնք վերաբերում են սույն հավելվածի 5-12-րդ կետերում նշված ուղղակի վճարումների առանձին տեսակներին:

4. Եկամուտների «չկապակցված» աջակցություն՝

1) վճարումներ ստանալու իրավունքը սահմանվում է Կողմ պետության ներպետական օրենսդրությամբ սահմանված այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են եկամտի մակարդակը, արտադրողի կարգավիճակը, արտադրության գործոնների օգտագործումը կամ արտադրության մակարդակը որոշակի եւ ֆիքսված բազային ժամանակահատվածում,

2) վճարումների գումարը չի սահմանվում եւ կախված չէ տվյալ արտադրողի կողմից արտադրված արտադրանքի տեսակից կամ ծավալից (ներառյալ անասնազլխաքանակը),

3) վճարումների գումարը չի սահմանվում արտադրված արտադրանքի ներքին կամ համաշխարհային գներով եւ կախված չէ դրանցից,

4) վճարումների գումարը չի սահմանվում արտադրության հիմքի վրա եւ կախված չէ դրա գործոններից,

5) վճարումներն ստանալու համար չի պահանջվում ներկայացնել արտադրանքը:

5. Պետական իշխանության մարմինների ֆինանսական մասնակցությունը եկամուտների ապահովագրման եւ դրանց անվտանգության ապահովման ծրագրերում՝

1) վճարումներ ստանալու իրավունքը սահմանվում է այն եկամուտների կորուստների միջոցով (մինչդեռ հաշվի են առնվում միայն գյուղատնտեսությունից ստացվող եկամուտները), որոնք գերազանցում են նախորդ եռամյա ժամանակահատվածում ստացված միջին համախառն եկամտի կամ զուտ եկամտի ձեւով դրա համարժեքի (այդպիսի կամ համանման ծրագրերի շրջանակներում ստացված եկամուտների բացառությամբ) կամ երեք տարվա համար միջին այն ցուցանիշի 30 տոկոսը, որը հաշվարկվել է նախորդ հնգամյա ժամանակահատվածի հիման վրա, որից բացառվել են տարեկան ամենաբարձր եւ ամենացածր ցուցանիշները: Այդ պայմանը բավարարող ցանկացած արտադրող ունի վճարումներ ստանալու իրավունք,

2) վճարումների գումարով փոխհատուցվում է արտադրողի եկամտի կորուստների 70 տոկոսից պակաս՝ այն տարվա համար, որում արտադրողն ստանում է օգնություն ստանալու իրավունք,

3) ցանկացած վճարումների գումարը կախված է միայն եկամտից, այն կախված չէ արտադրողի կողմից արտադրված արտադրանքի տեսակից կամ ծավալից (ներառյալ անասնազլխաքանակը), կամ այդպիսի արտադրանքի ներքին կամ համաշխարհային գներից, կամ արտադրության գործոնների օգտագործումից:

4) երբ արտադրողը միեւնոյն տարվա մեջ ստանում է վճարումներ սույն հավելվածի տվյալ կետի եւ 7-րդ կետի հիման վրա (օգնություն տարերային աղետների ժամանակ), ապա այդպիսի վճարումների ընդհանուր չափը կազմում է արտադրողի ընդհանուր կորուստների ոչ պակաս, քան 100 տոկոսը:

6. Բերքի ապահովագրման ծրագրերում՝ տարերային աղետների ժամանակ օգնության տրամադրման կարգով ապահովագրության ծրագրերի շրջանակներում ուղղակիորեն կամ պետական իշխանության մարմինների կամ նրանց կողմից լիազորված կազմակերպությունների ֆինանսական մասնակցությամբ կատարվող վճարումները՝

1) վճարումներ ստանալու իրավունքը ծագում է միայն նրանից հետո, երբ պետական իշխանության մարմիններն ընդունում են, որ տեղի է ունեցել կամ տեղի է ունենում տարերային կամ նման աղետ (ներառյալ Կողմ պետության տարածքում տեխնածին բնույթի իրադարձությունները, հիվանդությունների բռնկումները, վարակումը վնասատուներով, միջուկային վթարները եւ պատերազմը)՝ այնպիսի արտադրական կորուստներով որոշվող, որոնք գերազանցում են նախորդ եռամյա ժամանակահատվածում արտադրության միջին ցուցանիշի կամ նախորդ հնգամյա ժամանակահատվածի հիման վրա՝ ամենամյա ամենաբարձր եւ ամենացածր ցուցանիշների բացառմամբ հաշվարկված եռամյա ցուցանիշի 30 տոկոսը:

2) տարերային աղետի հետ կապված վճարումները կատարվում են միայն տվյալ իրադարձությամբ պայմանավորված եկամտի, անասունների (ներառյալ կենդանիների անասնաբուժական սպասարկման հետ կապված վճարները) կորուստների, գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառությունից դուրս գալու եւ արտադրության այլ գործոնների կապակցությամբ,

3) վճարումներով փոխհատուցվում է այդպիսի կորուստների ընդհանուր արժեքից ոչ ավելին՝ անկախ ապագա արտադրանքի տեսակից կամ քանակից,

4) տարերային աղետի ժամանակ կատարված վճարումները չեն գերազանցում սույն կետի 2-րդ ենթակետում սահմանված՝ հետագա կորուստները կանխելու կամ մեղմելու համար անհրաժեշտ մակարդակը,

5) երբ արտադրողը միեւնույն տարում ստանում է վճարումներ սույն կետի եւ սույն հավելվածի 6-րդ կետի հիման վրա, նման վճարների ընդհանուր չափը չի գերազանցում արտադրողի ընդհանուր կորուստների 100 տոկոսը:

7. Կառուցվածքային փոփոխություններին ուղղված օժանդակություն այնպիսի ծրագրերի միջոցով, որոնք դրդում են արտադրողներին դադարեցնել իրենց գործունեությունը.

1) վճարումներ ստանալու իրավունքը պայմանավորվում է հստակ սահմանված չափանիշներով՝ այնպիսի ծրագրերի շրջանակներում, որոնք նախատեսված են գյուղատնտեսական ապրանքային արտադրանքի արտադրությամբ զբաղված անձանց գործունեության դադարեցման դյուրինացմանը կամ նրանց՝ տնտեսության այլ հատվածներ տեղափոխման համար,

2) վճարումները կախված են օգնությունն ստացողի կողմից գյուղատնտեսական ապրանքային արտադրանքի լիակատար եւ մշտական դադարեցումից:

8. Աջակցություն կառուցվածքային փոփոխություններին՝ ռեսուրսների օգտագործման դադարեցմանն ուղղված ծրագրերի միջոցով՝

1) վճարումներ ստանալու իրավունքը պայմանավորված է հստակ սահմանված չափանիշներով՝ այնպիսի ծրագրերի շրջանակում, որոնք ուղղված են հողի կամ այլ ռեսուրսների՝ ներառյալ ընտանի անասունների՝ գյուղատնտեսական ապրանքների արտադրության նպատակներով օգտագործման դադարեցմանը,

2) վճարումները կախված են հողը՝ գյուղատնտեսական ապրանքային արտադրանքի արտադրության ոլորտից առնվազն երեք տարով դուրս բերելուց, իսկ ընտանի անասունների դեպքում՝ դրա սպանդից՝ այն բուծելը հետագա հրաժարվելուց:

3) վճարումներն իրականացնելու համար չի պահանջվում եւ չի որոշակիացվում այդպիսի հողերի եւ այլ ռեսուրսների այլընտրանքային օգտագործումը, որը կապված է գյուղատնտեսական ապրանքային արտադրանքի արտադրության հետ,

4) վճարումները կախված չեն արտադրանքի տեսակներից, քանակից, հողի կամ արտադրության համար պահպանվող այլ ռեսուրսների օգտագործմամբ արտադրված արտադրանքի ներքին կամ համաշխարհային գներից:

9. Կառուցվածքային փոփոխություններին ուղղված օժանդակություն՝ ներդրումների խթանման միջոցով՝

1) վճարումներ ստանալու իրավունքը պայմանավորված է պետական այնպիսի ծրագրերի շրջանակներում հստակ սահմանված չափանիշներով, որոնք նախատեսված են արտադրողի գործունեության ֆինանսական կամ ֆիզիկական վերակառուցման համար՝ օբյեկտիվորեն ապացուցված կառուցվածքային կորուստների հետեանքով: Այդպիսի վճարումներ ստանալու իրավունքը նաեւ կարող է հիմնվել գյուղատնտեսական հանդավարների ապապետականացման հստակ սահմանված կառավարական ծրագրի վրա:

2) վճարումների գումարը չի սահմանվում տվյալ արտադրողի կողմից արտադրված արտադրանքի տեսակների կամ ծավալի (ներառյալ անասնազլխաքանակը) հիման վրա եւ կախված չէ դրանցից՝ բացառությամբ սույն կետի 5–րդ ենթակետում նախատեսվածի,

3) վճարումների գումարը չի սահմանվում կոնկրետ ապրանքների ներքին կամ համաշխարհային գների հիման վրա եւ կախված չէ դրանցից,

4) վճարումները տրամադրվում են միայն այն ժամանակահատվածով, որն անհրաժեշտ է ներդրումներ իրականացնելու համար, որոնց համար նախատեսված են այդ վճարումները,

5) վճարումների իրականացման ժամանակ աջակցությունն ստացողին չի կարգադրվում եւ ոչ մի կերպ չի նշվում, թե նա ինչպիսի գյուղատնտեսական ապրանքներ պետք է արտադրի՝ բացառությամբ որեւէ կոնկրետ արտադրատեսակ չարտադրելու պահանջի,

6) վճարումները սահմանափակվում են կառուցվածքային կորուստների փոխհատուցման համար պահանջվող գումարով:

10. Շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծրագրերին առնչվող վճարներ՝

1) վճարումներ ստանալու իրավունքը պայմանավորված է շրջակա միջավայրի պաշտպանության եւ պահպանմանն ուղղված պետական ծրագրում մասնակցությամբ եւ կախված է տվյալ պետական ծրագրով նախատեսված կոնկրետ պայմանները կատարելուց՝ ներառյալ արտադրության մեթոդներին կամ անհրաժեշտ նյութերին վերաբերող պայմանները,

2) վճարումների գումարը սահմանափակվում է պետական ծրագրի կատարման հետ կապված լրացուցիչ ծախսերի կամ եկամտի կորուստների չափով:

11. Վճարումներ շրջաններին տրամադրվող օգնության շրջանակներում՝

1) այդպիսի վճարումների իրավունքը տրամադրվում է արտադրողներին՝ անբարենպաստ շրջաններում: Անբարենպաստ շրջանն իրենից ներկայացնում է Կողմի ներպետական օրենսդրությամբ սահմանված վարչական եւ (կամ) տնտեսական տարածք,

2) այդպիսի վճարումների գումարը չի սահմանվում գյուղատնտեսական ապրանքի (ներառյալ անասնազվխաքանակը) տեսակների կամ ծավալի հիման վրա եւ կախված չէ դրանցից, սակայն կապված է այդ ապրանքի արտադրության կրճատման հետ,

3) այդպիսի վճարումների գումարը չի սահմանվում կոնկրետ ապրանքների ներքին եւ համաշխարհային գների հիման վրա եւ կախված չէ դրանցից,

4) վճարումներն արտադրողներին են տրամադրվում միայն այն շրջաններում, որոնք ունեն օգնություն ստանալու իրավունք, եւ դրանք այդպիսի շրջաններում հասանելի են բոլոր արտադրողների համար,

5) արտադրության գործոնների հետ կապված վճարումներն իրականացվում են աստիճանաբար նվազող սանդղակով՝ արտադրության տվյալ գործոնին առնչվող շեմից վեր:

6) վճարումները սահմանափակվում են նշված տարածքում գյուղատնտեսական ապրանքներին առնչվող լրացուցիչ ծախսերի կամ եկամտի կորուստների չափով:

«Գյուղատնտեսությանը տրամադրվող պետական աջակցության միասնական կանոնների մասին» համաձայնագրի

**ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՌԵՎՏՈՒՐՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ԽԱԹԱՐՈՂ՝
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՑԱՆԿ**

Սույն Համաձայնագրի նպատակներով՝ 3-րդ հոդվածի առաջին կետի պարբերության համաձայն պետական աջակցության միջոցներ են ճանաչվում՝

լրավճարը տրամադրող մարմնի կողմից գյուղատնտեսական ապրանքների կոնկրետ արտադրողներին, դրանց խմբին կամ միավորմանն ուղղակի վճարումների կատարումը (ներառյալ բնահրային արտահայտությամբ վճարները)՝ կախված այդպիսի ապրանքների արտահանման արդյունքներից,

լրավճարը տրամադրող մարմնի կողմից գյուղատնտեսական ապրանքների ոչ առետրային պաշարներ վաճառելը կամ Կողմ հանդիսացող այլ պետության տարածք արտահանման համար առաջարկելը՝ Կողմ պետության ներքին շուկայում գնորդներին համանման ապրանքի համար առաջարկվող գներից ցածր գներով,

գյուղատնտեսական ապրանքի՝ այլ Կողմ պետության տարածք արտահանելու ժամանակ կառավարության աջակցությամբ ֆինանսավորվող վճարումների կատարումը՝ լինեն դրանք պետական միջոցների հաշվին, թե ոչ՝ ներառյալ վճարումները, որոնք ֆինանսավորվում են գյուղատնտեսական արտադրատեսակի նկատմամբ կիրառվող հավաքագրումից ստացվող հասույթից կամ այն գյուղատնտեսական արտադրատեսակի նկատմամբ կիրառվող հավաքագրումից ստացված հասույթից, որից արտադրվել է այլ Կողմ պետության տարածք արտահանվող արտադրատեսակը,

լրավճար տրամադրող մարմնի կողմից ֆինանսական աջակցության տրամադրում՝ այլ Կողմ պետության տարածք գյուղատնտեսական ապրանքների շուկայահանմանն ու առաջխաղացմանն առնչվող ծախսերի նվազեցման նպատակով (բացառությամբ արտահանման եւ խորհրդատվական ծառայությունների զարգացմանն օժանդակող

լայնատարած ծառայությունների)՝ ներառյալ բեռնման-բեռնաթափման աշխատանքների, արտադրանքի որակի բարձրացման հետ կապված ծախսերը եւ վերամշակման հետ կապված այլ ծախսերը, ինչպես նաեւ միջազգային փոխադրումների հետ կապված ծախսերը,

այլ Կողմ պետության տարածք արտահանելու համար նախատեսված գյուղատնտեսական ապրանքների փոխադրման ներքին սակագների սահմանումը՝ ավելի բարենպաստ պայմաններով, քան ներքին սպառման համար նախատեսված գյուղատնտեսական ապրանքների փոխադրման ժամանակ,

գյուղատնտեսական ապրանքներին պետական աջակցության տրամադրում՝ կախված այլ Կողմ պետության տարածք արտահանելու համար նախատեսված արտադրանքի մեջ դրանց ներառված լինելուց: